



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ  
ՅԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՄԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՄԱԼԻՐԻՆ

ԵԹԷ ՏԵՐԸ ԻՆՔ ՉՃԻՆԵ ՏՈՒՆԸ, ՉՈՒՐ ՏԵՂ ԿԸ ՅՈԳՆԻՆ ՉԱՅՆ ՃԻՆՈՂՆԵՐԸ.  
ԵԹԷ ՏԵՐԸ ԻՆՔ ՉՊԱՅՊԱՆԵ ՔԱՂԱՔԸ, ՉՈՒՐ ՏԵՂ ԿԸ ՅՈԿԵՆ  
ՊԱՅՊԱՆՆԵՐԸ  
(Սաղմոս 127.1)

Որքան կը պատշաճին այս խօսքերը Յիւսիսային Ամերիկայի Վրեւմտեան Թեմի Ազգային Առաջնորդարանիս համալիրի կառուցման, այն կառոյցին՝ որ քար ու աղիս, շինանիւթ, հող ու ու շաղախ ըլլալէ բացի, արդարեւ Ե՝ ոգեղեն կառոյց մը, հոգեւոր Եւ մշակութային օճախ մը, ազգին Տունը, որուն Պահապանն ու Կառուցողը Տեղը Ի՞նք Ե, ուրկէ գալիք աշխատանքը պիտի ծառայէ ի փառ Աստուծոյ, ի հոգեւոր շինութիւն ազգին զաւակաց Եւ ի հպարտութիւն Յայ ժողովրդեան:

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԲԱՑՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՀԱՄԱԼԻՐԻՆ

Տարիներու փայփայուած երազը հիմա կ'իրականանար, ծրագիրներու ու աշխատանքները իրենց լրումին կը հասնեին, առթուած դժուարութիւնները հիմա կը քաղցրանային՝ ի տես Ազգային Առաջնորդարանիս գեղակերտ շենքին բարձրացման, կառոյց մը՝ որուն մէջ հայկական ճարտարապետական ոճն ու արդին իրարու կը միաձուլուեին, տալով անոր վեհութիւն մը Եւ գեղեցկութիւն մը, որուն դիմացն անցած ժամանակ կարելի չէ պահ մը կանգ չառնել ու զմայլած չդիտել:



Կիրակի, 6 Մայիսի յետ միջօրեին Լա Ջրեսենթա հովիտը քիչ մը աւելի հայութիւն կը բուրեր: Ամերիկեան Եւ Զալիֆորնիա Նահանգի դրոշակներուն

կողքին հպարտութեամբ կը ծածանէր Յայկական Եռագոյնը: Իսկ հայրենիքին մեջ քանդակուած ու հոնկէ բերուած խաչքարերու ներկայութիւնը՝ տարբեր յոյս ու հաւատք կը ներշնչէր բոլորին անխտիր: Յայրենիքը հեռու, սակայն հայրենիքի ոգին իր մեջ ներառած նորակառոյց Առաջնորդարանիս համալիրը, այդ օր անգամ մը եւս ի մի կը խմբէր Թեմիս հոգեւորականները, ազգային ժողովականութիւնը, գաղութիս ղեկավարները, ազգային բարերարներն ու նուիրեալ ժողովուրդի զաւակները, միասնաբար ականատես վկաները ըլլալու Առաջնորդարանիս հանդիսաւոր բացման արարողութեան, ինչպէս նաև Ս. Տրդատ ու Ս. Աշխեն մատուրիս անուանակոչութեան, 16 սիւնախաչերու եւ մկրտութեան աւագանի օծման, ձեռամբ Թեմիս բարեցան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեանի:

Յանդիսաւոր այս բացման ներկայ էին պաշտօնական հիւրեր. Յայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Վրմեն Լիլյեան, Յայ Կաթողիկէ եւ Յայ Աւետարանական համայնքներու ներկայացուցիչներ, Յայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Յովիւ Վերապատուելի Յովսէփ Մաթոսնեան, ՅՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Դոկտ. Վիգեն Յովսէփեան, ՅՅԴ Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան եւ անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ՝ Տիար Խաժակ Տիքինեան, Ազգային Վարչութեան նախկին ատենապետներ Տեարք Յրայր Պալեան եւ Աւո Տօնոյեան եւ Վարչութեան անդամներ, ՀՕՄԻ, Հ.Ս.Ը.Ը.Ի, Յամազգայինի, հայրենակցական, բարեսիրական եւ մշակութային միութիւններու, Թեմիս Եկեղեցիներու հոգաբարձական, Երեսփոխանական եւ տիկնաց կազմերու ներկայացուցիչներ, ծխական Մարմիններ, Ազգային Վարժարաններու տնօրիններ, ազգային բարերարներ, նուիրատուներ, մամուլի եւ հեռատեսիլի ներկայացուցիչներ, եւ աւելի քան հինգ հարիւր ազգայիններ:

Յետ միջօրէի ժամը 3:00-ին, Ազգ. Առաջնորդարանի շենքի պաշտօնական բացումը եւ Եկեղեցական արարողութիւններէն անմիջապէս առաջ, շենքի հիւրաքանչիւր գրասենեակի եւ առանձին բաժնի բացման արարողութիւնն ու ժապաւենի հատումը կատարուեցաւ, ձեռամբ՝ Առաջնորդ Սրբազն Յօր եւ տուեալ բաժնի հովանաւորութիւնը ստանձնած բարերարներուն եւ անոնց հարազատներուն: Առ այդ՝ առաջին հերթին կատարուեցաւ շենքի առաջին յարկի՝ մուտքի, ընդունարանի, գրասենեակներու, ժողովասրահի, «Տիգրան եւ Զարուհի Տեր Ղազարեան» սրահի եւ գրատան բացումը, ապա Երկրորդ յարկի հարաւային թեւի՝ Ջրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի, Լրատուական, Պետական Վարժարաններու Յայ Աշակերտներու Յարցերով Զբաղոր Յանձնախումբի (CASPS), Խնամակալ Մարմինի, Տիկնաց Մարմինի եւ Յիւրերու Կեցութեան բաժնի սենեակներու բացումը, ապա հիւսիսային



թեւին վրայ եղող ընդունարանի, սեղանատան, Առաջնորդ Սրբազն Յօր գրասենեակի ու կեցութեան բաժնի եւ «Սիլահեան դահլիճ»ի բացման արարողութիւնը: Իւրաքանչիւր գրասենեակի եւ յարակից բաժիններու բացումը կատարուեցաւ օրինութեամբ եւ աղօթքով:

Իսկ ժամը 4:00-ին, յատուկ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ Ազգ. Առաջնորդարանի նորակառոյց համալիրի պաշտօնական բացման արարողութիւնն ու ժապաւենի հատումը, ծեռամբ՝ Առաջնորդ Սրբազն Յօր, Առաջնորդարանիս գլխաւոր բարերար Տէր եւ Տիկին Ժան եւ Աստղիկ Պետրոսեանի, Յայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմեն Լիլոյեանի, ՅՅԴ Բիլոյի Ներկայացուցիչ Դոկտ. Վիգեն Յովսեփեանի, ՅՅԴ Կեդրոնական Կոմիտէի Ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրեանի, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիգիճեանի եւ Ազգային Վարչութեան Վտենապետ Դոկտ. Կարո Յակոբեանի:

## ԱՆՈՒԱՆԿՈՉՈՒԹԻՒՆ Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ ՄԱՏՐԱՆ, 16 ՄԻՒԱՆԱՉԵՐՈՒ, ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԱԽԱՍԻ ԵՒ ՄՐԲԱՊԱՏԿԵՐԻ ՕԾՈՒՄ

2005-ի Յոկտեմբերին, երբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Յայրապետը հովուապետական այցելութեամբ կը պատուեր Արեւմտեան մեր Թեմը, իր ծեռամբ կատարուեցաւ Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան Ս. Խորանի եւ գմբեթի խաչի օծումը, ինչպէս նաեւ նորակառոյց Առաջնորդարանի համալիրին օրինութիւնը:

Յիմա հասած եր ժամանակը կատարելու մատրան անուանակոչութիւնը, 16 սիւնախաչերու, մկրտութեան աւազանի եւ սրբապատկերի օծումը, ծեռամբ՝ Առաջնորդ Սրբազն Յօր:

Յանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր եւ առընթերակայութեամբ Տ. Միւրոն Ծ. Վրդ. Ազնիկեանի ու Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեանի, եւ մասնակցութեամբ Թեմիս քահանայից ու սարկաւագաց դասերուն, ի Ներկայութեան մատրանս գլխաւոր բարերարներ՝ Տիկ. Աշխեն Փիլաճեանի եւ իր զաւակաց՝ Տէր եւ Տիկին Վահրիճ եւ Սոսի, եւ Տէր եւ Տիկին Բեգլար եւ Վերա Փիլաճեաններու, ինչպէս նաեւ՝ սիւնախաչերու կնքահայրերուն, խորանի, մկրտութեան աւազանի, մոմավառութեան սեղանի, վերնատան երգեհոնի եւ սրբապատկերի բարերարներուն, կատարուեցաւ հոգեպարար արարողութիւն՝ նորակառոյց Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան մէջ: Արարողութեան հաւատացեալներ սրահեն ներս թէ դուրս կը հետեւեին կենդանի սփռումով՝ պաստառներու վրայ:

Յոգեւորականաց թափօրը «Ուրախ լեր» շարականի երգեցողութեամբ յառաջացաւ մատուռ: Յուզիչ եր պահը, երբ հաւատացեալները միաբերան ամեն անգամ կ'երգեին հայու հաւատքի ընկերքէն ժայթքող «Ամեն. Ալելուիա», ալելուիա, ալելուիա»ն: Եւ ամեն մէկ երգին հետ՝ Ս. Յոգիի օծութիւնը կը խնդրուեր մկրտութեան Ս. աւազանին վրայ, իսկ սիւն մը կ'օծուեր հաւատքի ախոյեաններու անունով: Օրինուեցաւ նաեւ մոմավառութեան սեղանը, եւ Անդաստանի արարողութեամբ եւ օրինութեամբ կատարուեցաւ Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան անուանակոչութիւնը՝ անուամբ Յօր եւ Որդույ եւ Յոգոյն Սրբոյ:

Օծման եւ օրինութեան արարողութեանց աւարտին, յատուկ աղօթք եւ հոգեհանգիստ կատարուեցաւ Ազգ. Առաջնորդարանի գլխաւոր բարերարներու, յատկապէս՝ Ալեքսան Փիլաւճեանի, Ռիչըրտ Գարոլանի, Յայկ եւ Այկիկ Մինասեաններու, Տիգրան եւ Չարուիի Տէր Դազարեաններու, բոլոր ննջեցեալ բարերարներու, ինչպէս նաև համալիրէն ներս իրենց սիրելիններու յիշատակին կանգնած սիւսաքանդակներու, խաչքարերու, շրադիրի եւ յուշակոթող դողանցին հովանաւորութիւնը ստանձնած բարերարներու հարազատներու յիշատակին:

## **ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԽՕՍՔԵՐ**

Հոգեպարար արարողութեանց աւարտին, «Տիգրան եւ Չարուիի Տէր Դազարեան» սրահէն ներս, գործադրուեցաւ պաշտօնական յայտագիր մը, հանդիսավարութեամբ Փաթիլ Աբովեան-Գասպարեանի:



Ընորհակալական խօսքերով հանդէս եկաւ Շինարարական Յանձնախումբի Ատենապէտ Տիգր Վահան Պզտիկեան, ըսելով՝ «Այսօր մեր տարիններու երազը իրականացած է: Երազ մը որ Սրբազն Յայրը սնուցանեց երկար տարիններ եւ հասցուց այս իրականութեան՝ ձեր անվարան նեցուկով եւ յարատեւ քաջալերութեամբ...: Կոթողային այս գործը իրականացաւ շնորհիւ ձեր անսակարկ նիւթական նուիրաբերումին եւ բարոյական քաջալերանքին: Ես շնորհակալական խօսք ուսիմ մեր բոլոր բարերարներուն անխտիր, որոնք իրենց լուման ձգեցին այս ազգաշէն եւ Եկեղեցաշէն գործի գանձանակին մէջ»:

Ընորհաւորութեան խօսքով հանդէս եկաւ նաև Ազգ. Վարչութեան Ատենապէտ Դոկտ. Կարօ Յակոբեան, որ իր խօսքին մէջ բարձր գնահատեց յատկապէս Առաջնորդ Սրբազն Յօր տարած հետեւողական աշխատանքը եւ աննկուս կամքը՝ ուսենալու համար Ազգային Առաջնորդարանի համալիր մը: Եւ իր խօսքը փակելով ըսաւ. «Սրբազն հայր, քու երկունքովդ ծնած այս տունը, այսօր կը նուիրենք Յայ ժողովուրդին. Ես հոս կ'ուզեմ փակագիծի մէջ բնորոշել երկունք բառը իր հնագոյն իմաստով՝ «Նեղուիլ, յոգնիլ, չարչարուիլ», եւ նորագոյն իմաստով՝ «Աշխատիլ, բանիլ եւ գործել», որովհետեւ «պարտ է մեզ գործել յոյժ գգործս հոգւոց մերոց», մէջբերելով Ներսէն Լամբրոնացին»:

Սրտի խօսք արտասանեց նաև Յայաստանի գլխաւոր հիւպատոս Տիգր Արմեն Լիլոյեան, որ նորակառոյց այս տունը կոչեց հոգեւոր օճախ մը, շեշտելով այս՝ թէ Աստուծոյ Յոգին է որ քարեղին այս շնոքը կը դարձնէ ոգեղին կառոյցի:

Փակման, օրինութեան եւ շնորհակալական խօսք արտասանեց Առաջնորդ Սրբազն Յայրը: Սրբազնը նախ փառք տուաւ ամենաբարին Աստուծոյ, որ «մեր բոլորին աղօթքները լսեց եւ իր անունին փառաբանութեան, իր իսկ հաստատած Յայց. Առաք. Եկեղեցւոյ

առաքելութեան տարածման եւ ժողովրդանուեր հոգեւոր ծառայութեան նուիրուած լոյսի ու հաւատքի այս դարբնոցը կարելի դարձուց կառուցել»։ Սրբազնը այս պահը «պատմական եւ անկիւնադարձային» օր համարեց, որովհետեւ անշնչելի տառերով կ'արձանագրուի Արեմտեան Թեմի ուկեմատեանին մէջ։ Սրբազնը շեշտեց, որ «Յայ ժողովուրդի նիւթական եւ բարոյական անհուն զոհողութիւններով կառուցուած Ազգին այս Տունը՝ սեփականութիւնն է հայ ժողովուրդին...։ Յայրենից հեռու, Խաղաղականի այս ափերուն, հայրենիքն բերուած սրբատաշ քարերով կառուցուած հայ հաւատքի նորագոյն այս խորանը, դէպի երկինք բարձրացող ամենօրեայ խոնկ ու աղօթք է եւ յուշարար՝ հերոսապատում հայոց սիրալի ժառանգութեան ու ապագայի շքեղ իրագործումներուն»։



Ապա Սրբազնը երախտագիտական ու որդիական զգացումները յայտնեց Ս. Վթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետին, յիշեցնելով բոլորին, որ 2005 Յոկտեմբերը անմոռանալի պիտի մնայ Արեմտեան Թեմին պատմութեան մէջ, յատկապես անոր համար, որ Նորին Սրբութիւնը ինք իր Յայրապետական օրինութեամբ կատարեց Առաջնորդարանին դեռ կառուցուող համալիրին տնօրինեքը, եւ իր քաջալերանքով ու օրինութեամբ այսօր իր աւարտին կը հասներ շինարարական աշխատանքը։ Սրբազնը շնորհակալական ու շնորհաւորութեան խօսք ուղղեց նաեւ իրերայաջորդ Ազգային Վարչութեանց կազմերուն, «ազնուահոգի բոլոր բարերարներուն, նուիրատուններուն, շենքի շինարարական յանձնախումբին, ճարտարապետներուն, եւ բոլոր այն նուիրեալներուն, որոնք շենքի գնման առաջին օրեւ մինչեւ վերանորոգման աշխատանքներուն աւարտը՝ ճիգ եւ շանք չինայեցին նիւթապես եւ բարոյապես զօրավիգ կանգնելու ազգին տունը կառուցելու մեր համայնական ճիգերուն»։ Յականէ յանուանէ յիշեց յատկապես՝ Առաջնորդարանի գլխաւոր բարերարներ՝ Տէր եւ Տիկ. Ժան եւ Աստոիկ Պետրոսեանները, Ռիզըրտ եւ Թիևա Գարուլան ընտանիքը, Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն մատրան բարերարուիի ազնուափայլ Տիկ. Աշխեն Փիլաւճեանը, Տէր Ղազարեան եւ Սիլահեան ընտանիքները, «որոնք իրենց սրտեն ու հաւատքեն, Աստուծոյ ու հայ Եկեղեցւոյ պայծառութեան համար նուիրաբերեցին, կանգուն, բարգաւաճ, շեն եւ կենսախայտ դարձնելու ազգին հոգեւոր այս տունը»։

Առաջնորդ Սրբազնը այս առթիւ յայտարարեց թէ ազնիւ նուիրատուններ եւ պատուարժան բարերարներ, Ազգ. Առաջնորդարանի պաշտօնական բացման ուրախ առթիւ՝ կը կատարեն աւելի քան 300 հազար տոլարի նոր նուիրատուութիւն։ Ստորեւ կու տանք ցանկը նուիրատուններուն.-



Տեր Եւ Տիկին Ժան Եւ Աստղիկ Պետրոսեան	100.000
Տիկին Աշխեն Փիլաւճեան	50.000
Դոկտ. Եւ Տիկին Յովսեփ Եւ Յիլտա Ֆիտանեան	35.000
Տիկին Տիգրանուիկ Ռուհինեան Եւ	
Տեր Եւ Տիկին Էտմոնտ Եւ Մարինա Ռուհինեան	35.000
Տեր Եւ Տիկին Ասատուր Եւ Տիանա Մարաֆեան	25.000
Տիկին Մարիամ Կարապետեան	25.000
Տիկին Անոյշ Մարթայեան	25.000
Տեր Եւ Տիկին Յակոբ Եւ Յիլտա Պաղտասարեան	6.000
Տեր Եւ Տիկին Պետրոս Եւ Աննա Օրունաքիլի	5.000
Տեր Եւ Տիկին Վահե Եւ Վերոնիկ Կարապետեան	3.000
Մի Ոմն	3.000
Տեր Եւ Տիկին Յենի Եւ Նորա Սահակեան	2.500
Տեր Եւ Տիկին Գեորգ Եւ Յուրի Աբոշեան	2.500
Մի Ոմն	1.000
Օրդ. Ռոգեթ Յարութիւնեան	1.000
Տեր Նարեկ Ալ. Ջինյ. Եւ Երեցկին Շրիքեան	1.000
Տեր Եւ Տիկին Ժան Եւ Փաթիլ Գասպարեան	1.000
Հայց. Առաք. Եկեղեցւոյ Եղբայրակցութիւն	500

Խօսքի աւարտին, Առաջնորդ Սրբազնը աղօթք բարձրացնելով Աստուծոյ ըսաւ. «Ո՞վ Տեր Աստուած, խոնարհաբար ու ազգովին, Ձեզի՝ ու Չու անհաս փառքիդ կ'ընծայաբերենք կոթողն այս հայակերտ: Դո՞ւն եղիր անոր պաշտպանը. բարի Ազքդ պահապան ըլլայ Եւ նախանձախնդիր հզօր Աշդ պահապան: Մեր բարի ծառայութեան առաքելութիւնը պտղաբերէ, ի փառս ամենասուրբ Երրորդութեան, յանսասանութիւն Հայ Եկեղեցւոյ Եւ ի բարի հոգեւոր վայելումն հայ ժողովրդեան»:

Սրբազն Հօր «Պահպանիչ»ով, «Կիլիկիա» մաղթերգի ու Ազգային օրիներգի միասնական կատարումով վերջ գտաւ պաշտօնական այս բաժինը:

### ԽԱԶՔԱՐԵՐՈՒ, ՅՈՒԾԱՊԱՏԵՐՈՒ, ԴՐՈԾԱՍԻՒՆԵՐՈՒ, ԱՂԲԻՒՐԻ ԵՒ ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿ ՅՈՒԾԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄ

Առաջնորդ Սրբազնը, պատուական հիւրերուն, բարերարներուն Եւ հոծ բազմութեան ներկայութեան, կատարեց նախ Մատրան Եւ Ազգային Առաջնորդարանի գլխաւոր պատերուն վրայ արձանագրութեանց բացումը, գլխաւոր բարերարներ Տեր Եւ Տիկին Ժան Եւ Աստղիկ Պետրոսեանի Եւ Տիկին Աշխեն Փիլաւճեանի հետ միասին քօղով վարագուրուած արձանագրութիւնները բանալով, ապա նաեւ կատարեց շրջաբակէն ներս կանգնած խաչքարերու, յուշապատերու, դրօշասիւններու, աղբիւրի Եւ անլուելի զանգակ յուշաբանի բացումը:

Առիթ տրուեցաւ նաեւ յիշատակի լուսանկարներ առնել անհատ բարերար ընտանիքներու հետ միասին, ինչպէս նաեւ Ազգային

Վարչութեան, Տիկնանց Միութեան, Երիտասարդաց խմբակի, հայրենակցական միութեանց եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներու հետ:

Տեղի ունեցաւ պատշաճ հիլրասիրութիւն, հիլրընկալութեամբ՝ Robert's Catering-ի: Այս ընթացքին ներկաները առիթ ունեցան շրջելու եւ մօտեն ծանօթանալու գրասենեակներուն ու շենքի յարակից մասերուն, ինչպէս նաեւ տարուած աշխատանքին:

Այս բոլորին ետք մեկ բան կը մնայ մաղթել. Աստուած օրինե՛ Արեւմտեան Թեմը, իր Առաջնորդով եւ հոգեւոր դասով, իր ժողովականութեամբ, բարերարներով եւ ազգայիններով, բարի ծառայութեամբ եւ աստուածանուեր առաքելութեամբ առաջնորդէ բոլորին քայլերը, անսասան պահէ Կիլիկիան դարաւոր Ս. Վթոռը, պայծառացնէ Հայց. Առաքելական Սայր Եկեղեցին, հզօրացնէ Հայրենիքը եւ խնորհազարդէ մեր ժողովուրդի համայն զաւակները:

Պ.Վ.Կ.

## OFFICIAL OPENING CEREMONY OF THE WESTERN PRELACY NEW HEADQUARTERS

*Unless the LORD builds the house, They labor in vain who build it;  
Unless the LORD guards the city, The watchman stays awake in vain.  
(Psalms 127.1)*

On the afternoon of Sunday, May 6, clergy members, council members, community leaders, benefactors, donors, and hundreds of faithful congregated at the Western Prelacy to join H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the official opening ceremony of the new headquarters as well as the naming ceremony and consecration of the pillars and baptismal font of the St. Dertad and St. Ashkhen Chapel.

Also participating in the ceremony were a number of official guests including Consul General of the Republic of Armenia in Los Angeles Armen Liloyan, representatives from the Armenian Catholic Church, Minister of the Armenian Evangelical Union of N. America Rev. Joe Matossian, A.R.F. Bureau representative Dr. Vicken Hovsepian, A.R.F. Central Committee representative Mr. Avedik Izmirlian and members, Catholicosate Central Executive Council members Mr. Khajag Dikijian, former Executive Council Chairmen Mr. Hrair Balian and Mr. Avo Donoyan, representatives from A.R.S., Homenetmen, Hamazkayin, compatriotic unions, Boards of Trustees, delegates, and Ladies Auxiliary members, Prelacy Schools' principals, and media.

At 3:00 p.m., prior to the official opening ceremony, sponsors gathered at the building for the ribbon-cutting of the respective rooms they sponsored

during which took place with the Prelate's prayers and blessings. The ceremony began on the first floor with the ribbon-cutting of the lobby, reception area, staff offices, conference room, "Dikran and Zarouhi Der Ghazarian" Hall, and bookstore. The Prelate and sponsors then headed to the second floor for the ribbon-cutting of the Christian Education Department, media room, CASPS, Board of Regents, Ladies Auxiliary, guest quarters, reception area, dining room, Prelate's living quarters, and the "Sulahian" reception hall. At 4:00 p.m., the official ceremony began with the ribbon cutting of the building's entrance by the Prelate and grand benefactors Mr. and Mrs. John and Asdghig Bedrosian.

During the Pontifical visit of H.H. Aram I, Catholicos of the Great House of Cilicia, His Holiness consecrated the altar and cross atop the St. Dertad and St. Ashkhen Chapel. On Sunday, May 6, the Prelate officiated over the official naming ceremony of the Chapel as well as the consecration of the sixteen pillars, baptismal font, and saint's icon, in the presence of Chapel benefactor Mrs. Ashkhen Pilavjian and sons Mr. and Mrs. Vahrij and Sossi Pilavjian and Mr. and Mrs. Peklar and Vera Pilavjian, and sponsors. The Prelate was assisted by Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian and with the participation of clergy members and deacons. Following the consecration ceremony, requiem service took place for Prelacy benefactors specifically Mr. Alexan Pilavjian, Mr. Richard Carolan, Mr. and Mrs. Haig and Aygul Minassian, and Dikran and Zarouhi Der Ghazarian.

Following Chapel services, guests gathered at the "Dikran and Zarouhi Der Ghazarian Hall" for the official program which began with welcoming remarks by MC Mrs. Pattyl Aposhian-Kasparian, followed by remarks by Building Committee Chair Mr. Vahan Bezdkian, Executive Council Chair Dr. Garo Agopian, and Consul General Armen Liloyan.

In his closing remarks the Prelate first offered thanks and gratitude to Almighty God for answering our prayers and making our dream of building this bastion of our faith a reality. "This establishment, which was built with the continuous moral and financial support of our people, is dedicated to the spiritual, religious, educational, and administrative needs of our people. This hallowed building is the symbol of our rich heritage and our future achievements." The Prelate once again expressed his gratitude and filial love to H.H. Catholicos Aram I for the blessing of the home which he conducted in October 2005 during his Pontifical visit and for his constant encouragement and blessings. The Prelate then expressed thanks to the donors and sponsors, building committee members, architects, and countless servants for their continuous support of the Prelacy's endeavors and mission, and expressed his sincere appreciation and gratitude to grand benefactors Mr. and Mrs. John and Asdghig Bedrosian, Richard and Tina Carolan and family, benefactor of the St. Dertad and St. Ashkhen Chapel Mrs. Ashkhen Pilavjian, and the Sulahian and Der Ghazarian families for their enduring moral and financial support and their invaluable contributions to this project from its onset to its successful

completion. In closing, the Prelate announced that \$300,000 in donations were made on this joyous occasion by the following:

Mr. & Mrs. John & Asdghig Bedrosian	\$100,000
Mrs. Ashkhen Pilavjian	\$50,000
Dr. & Mrs. Hovsep & Hilda Fidanian	\$35,000
Mrs. Dikranoohy Roohinia and	\$35,000
Mr. & Mrs. Edmond & Marina Roohinian	
Mr. & Mrs. Assadour & Diana Sarafian	\$25,000
Mrs. Mariam Karapetian	\$25,000
Mrs. Anoush Martayan	\$25,000
Mr. & Mrs. Hacop & Hilda Baghdassarian	\$6,000
Mr. & Mrs. Bedros & Anna Oruncakciel	\$5,000
Mr. and Mrs. Vahe & Veronika Karapetian	\$3,000
Anonymous	\$3,000
Mr. & Mrs. Henry & Nora Sahagian	\$2,500
Mr. & Mrs. Kevork & Houry Aposhian	\$2,500
Anonymous	\$1,000
Ms. Rosette Haratoonian	\$1,000
Rev. & Yeretsgin Nareg & Baydzar Shrikian	\$1,000
Mr. and Mrs. John and Pattyl Kasparian	\$1,000
Armenian Ecclesiastical Brotherhood	\$500

The official program concluded with the benediction by the Prelate.

Following the official program, guests witnessed the unveiling of the plaques on the building and Chapel by benefactors Mr. and Mrs. John and Asdghig Bedrosian and Mrs. Ashkhen Pilavjian. That ceremony was followed by the blessing of khachkars, memorial walls, flag pole, fountain, bell tower monument and memorial garden. A reception ensued prepared by Robert's Catering during which guests had the opportunity to tour the building.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](#) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.